

բայց Ձիոյ պայծառմանի մասին բնաւ յիշատակութիւն չունիք։ մանաւանդ թէ Սիսուանի եր. 487 ծանօթագրութեան մէջ ընդհաւկառական Գրաստու բժշկարանի կամ Զրաբուժեան թարգմանութիւնը կամ յօրհնումն ալ Սիբաստ Գուդատապլին կը վերագրէ։ Ասկէ կը գուշակեմ՝ որ Ալիշանը կամ Պարսիկ յիշեալ գրագրի յիշատակաւ ըսնը ճանչցած չլլայ, եւ կամ որ աւելի հաւանական է ճանչցեր է, բայց Ստեփանոսի մասին եղած այս անորոշ բացատրութիւնը, թէ «Խնդրեաց յարքայէն եւ ետ թարգմանեց», եւն, այնպէս հասկցած է որ Ստեփանոս՝ Գուդատապլին թարգմանել տուած ըլլայ այն։

Բլումինայի ղէպս՝ ինձ համար ալ աներկ ըսելի է Ա. որ Գրաստու բժշկարանը՝ Ժ. Գ. դարու առջին կիսում թարգմանուած է յարաբերէնէ՝ Ստեփանոս գիտնական Սարկուսի կամ քահանայի ձեռքով։ Բ. թէ մեզ հասած մագաղաթեայ թերթերն ամէնայն հաւանականութեամբ կարող են նոյն իսկ Ստեփանոսի թարգմանութեանն հետ գոյն օրինակին կամ սկզբնագրին մնացորդ մ'ըլլալ։ Աւստի զանազն տպագրութեամբ ծանօթացուած ժամանակ, կը խնդրեմք ջերմագին այն անմիջեմբէն, որ ունին ուրիշ պատառիկներ՝ որ հաճին մեզ յուզարկել՝ ձեռագիրն ամբողջացնելու եւ այնպէս հրատարակելու համար։ Այսպիսի հրատարակութիւն մը — ի հարկէ ուսումնաւորութեամբ — վերջին աստիճան օգտակար պիտ' ըլլայ նախ մեր միջնադարեան լեզուի արուեստարանութեան (technologie) եւ երկրորդ՝ ծիադարմանութեան համար՝ ուսյ ազգաբնակչութեան մէջ, ուր հնուց ի վեր ազնիւ ձին եւ ծիաբուժութիւնը մեծ տոկոսներ տուած է բնաշխարհին եւ օտարաց։

Հ. Բ. Ս.

Յրանաացի մը, Պ. Արմանկօ, Յրանասայի գիտութեանց հեմարանին ներկայացուցած է գիւտ մը՝ որով Փարիզ կեցողը պիտի կարենայ նիւ — էօրքի մէջ անցած բոլոր տեսարանները դիտել։ Ճամբորդութեան ծախքերը բաւական կը նուազին այսու։

Գիւտին հեղինակը իր գործիքին տուած է շարժանկարի (cinématographe) ձև։

Ի ԳՐԱՍՏՈՒՆ ԲԺՇԿԱՐԱՆԷՆ ՓՈԽԱՍ

Ա

Յաղագս Կաղնարոյ

«Գրաստուն կաղն երկու ցեղ է. է որ ի ծածուկ կաղայ, և է որ յայտնի։ Եւ որ կամենայ ճանաչել՝ այս է նշանքն։ Որ ի մէկ ոտիցն կաղայ՝ նա ի գլխոյն շարժելն ճանչուի և ի կալափցնելն։ Եւ յորժամ հալծեցնեն զձին և կանգնեցնեն որ պաղէ, և ձեռաւք փնդոնն յերին և ի ծունկքն և ի կոճքն և ի սմբակքն և ի յետի ոտին, նա երևնայ թէ ուստի՝ կու կաղայ, Եւ յորժամ ի դոյր քարուտ գետին կալափցնեն՝ նա թէ ի սմբակն կենա՝ կաղութիւն նա երևնա. և թէ չլինի ի սմբակն՝ նա եր ընդ դարիվեր հանեն կամ որ ի սանդղատն կոխէ, նա ի վերայ բազկացն վախհաստի։ Եւ յորժամ թապլի գրաստն, նա առաւել յայտնի կաղութիւնն. և երբ անկասկած ի շուռ ածեն զգրաստն՝ ի մէկքնն ու ի մէկայն՝ նա թէ ի կուրծքն կամ ի բէճքն կենա՝ կաղութիւնն նա եւրենա։

Բ

Յաղագս Յրնոտի

Գրաստ որ ֆրնտու լինի՝ հեալ խիստ, և լարի պինճքն, թուլնա գլուխն և ամէն զաղվածքն. փայտնայ ոտվին, կտրի ի կերոյ. և ի սկիզբն մինչեւ յերեք աւրն շունչն տաք լինի. և ապա պաղէ շունչն և այլընդլի. աչվին խիթի, և դժար շարժի ամէն զաղվածքն, և տըալով գոզէ, և դժար ճայլ փոխէ. և թէ ընկնի՝ դժար ելնէ ի յոտն. և լինի որ քրունէ անդունդն։

Բժշկութիւնն է այս ցառուս — Երանկ՝ և չորս աւր չուտեցնենք դարի. յետ չորս աւուրն կանգնեցնեն զինք երեք աւր ի գնացք շուր, որ թաղվի ինչվի բովքն ի շուրն. ու յամեն աւր տաքպա մի հանեն

ի ջրէն և աւծնեն ամպակ գինով և հո-
ռաւմ ձիթով աղեկ , ու մարձեն . դէպի
վայր : Եր ոտովին կակղնա ու լաւնա որ
աղեկ քայլէ , նա անցնցեցնեն ու ար-
ծեն : —

Գ

Յաղագս քումոյ և ոտեցի, որ յկարէ քրքել
և գոգել .

Նշանքն այս է . Գրաստն քթահրի, ու
ջանա որ նստի, ու դառնա որ դէպի յետ
հայր : Բժշկութիւնն է . Ա՛ռ հին գինի լիտր
Բ և ջուր ժ լից ի վերայ . և առ խոզ-
տի լիտր Ա և անգուժատ դրամ ժ, ծեծէ
զանգուժատն՝ և խառնէ ի հետ քչիկ մի
ալոյր ու խառնէ ի ջրած գինին ու եղկը-
ցո՛յ ու դիր հոռամղեղ . Եւ ապա առ կա-
նաչ գնձի ջուր լիտր մի, և խմցո՛յ քչիկ
քչիկ :

Դ

Յաղագս քրի, որ յիւնի ի գրաստուն տո՛ւն
կամ ի ձուքն

Փաշեն ձար մի յագոյն ու կապեն զթը-
թին տակն պինտ, ու թողուն Ե աւր . ու
ծխեն ներքեւ անձրութ, նա կորի ու ընկ-
նի : Այլ ղեղ . Առնուն սաւնաւարի կեղ և
դր . Ե եփեն յամպակ գինի և ծփեն զտե-
ղին :

Ե

Յաղագս կոյրնի

Նշանքն է՝ որ թուլնա շլնիքն, բռնվի
զաւղվածքն, դողայ՝ նստի ու թապլի՝ և
եւնէ ի բերնէն փրփուր — Բժշկութիւնն է .
Ա՛ռ թառանգութիւն դր . ժ, տորբէ գինք ,
յԳ լիտր շող ջուր՝ ու լից ընդ փողքն ի
վայր և անցնցեցո՛յ . և թաթխէ՝ գձեռնա
ի մեղրն և ի ձէթն՝ և մտոյ ի գրաստուն
որովայնն և սրբէ : Այլ ղեղ . Ա՛ռ հայ-

խռնիկ նուկի Ա, լոսէ ու մաղէ , ու առ
մեղր դգալ Գ, հին գինի լիտր Գ, քացախ
Գ գալ Ե, խառնէ ընդ իրար . Գ բաժին
արա՝ ու լից յամէն աւր բաժին մի ընդ
փողքն ի վայր , ծածկէ ջեր և ած ի
շուռ :

Զ

Յաղագս քածպարի

Նշանքն է . Որ իշուկակնի նման լի-
նի, բայց չառնու զամէն ձեռն . և եւնէ
յիրմէ գինութիւն և թարախ : Բժշկութիւնն
է : Ա՛ռ երակ ի բազկունքն ընդներքսէ
և ընդդրացէ . և լուս զխոցն շող ջրով
սպկիկ, ու թող որ ցամքի . և առ մեղր
դր . Ի ու դդմի կտոր, այրէ՝ որ լինի գոր-
ծելի . լեսէ ու խառնէ հետ մեղրին , ու
կապէ քթեթով Գ աւր , ու ապա բաց,
թէ չլինի ողջեւ, դու երկու երեք հետ
այլ արա :

Է

Յաղագս Մկնատմերոյ

Եփէ զաւշնանն ու ջրո՞վն լուս սպկիկ
ու ցամքեցոյ, ու աւծնէ գինք քաղցր կա-
րագով ի յաւրն Բ տարպա, ու մի թամ-
բեր ու հծնու ինչվի ողջանա :

Ը

Յաղագս Ըստմատիսի :

Նշանքն է . որ իջնու ջուր ի քթէն որ
չլինի հոտած . և փաքայ՝ որ արցվէ աչքն :
Բժշկութիւնն է : Լից ընդ քիթն ի վայր
մանուշկի ձէթ ու փռնթրացո Գ աւր ,
ու խաշէ զաղի ձուկնն ու լից զջուրն ընդ
քիթն ի վայր՝ որ փռնթրա, ու ծխէ ընդ
քիթն ի վեր յատպէ ու խունկ :

Թ

Յաղագս Ֆարսին

Այս սպիտակ կեղեմինոր որ չլինա հա-
սկ յինք ջուր, ու շփէ զՖարսինն ակ-
ներն աղէկ՝ վաղն ու յիրիկունն, ու լուա
զինք պախրի գողով. նա ելնէ յիրմէ զեղ
կորեկ հատեր. և առ աղեկ կալեքար, լո-
սէ ու մաղէ ու ի վերայ ցանէ ու լուա ըզ-
խոցերն վաղն ու յիրիկունն:

Ժ

Յաղագս գայլ ցառի

Նշանքն է. լարէ շինիքն և ակընջվին.
քաշվի. աշիցն սեուցն՝ որ սպիտակուցն
շատ երևնա, և փայտնա շինիքն որ չհաս-
նի ի գետինն, և կորի յալէ և ի ջրէ.
և պատճառն լինի ի հովէ և ի քրտեկոյ,
որ դիպի յինք քամի և պաղի, և յայն որ
յարեգակն կապեն. — Բժշկութիւնն է. կա-
պէ զգրաստն ի մուկն տուն ու քերթէ
զմաքին՝ ու զմորթին շող շող հագոյ ի
վրայ զլիւսն ու շինեցն ու աղեկ կարէ, և
զրուրդն ի դուրս արթ. և շողցոյ զարդար եղն
ու լից ընդ ականջն ի վայր, ու աւծնէ
զամէն կոնակն ու զողնն ու զըզովքն. ու
տուր առվոյտ ուտեկոյ. ու ի մաւտ կեցիր
ու բարձր կապէ՝ որ չնստի. ու զմոշին
ու զխնկլիկի փոշին ծխէ ներքեն. ու վա-
ռէ ի խնչն զմոշին կամ հայնց փայտ՝ որ
մուխ չայնէ. և լից ընդ փողքն ի վայր
խանդիրուռնի շարապ. Բժշկներն գիտեն.
— Այլ դեղ. Առ խոզոր փինոյ խէժ ու հո-
ռամ ձէթ, շինէ զայս աւծնելիք ու աւծ-
նէ զգրաստուն ամէն մարմինն մաղվիւր:
Այլ դեղ. Առ մոմ ու ձիթնոյ խէժ. հալէ
ի հոռամ ձէթն, և շինէ զեղ մորհամ և
ի բան տար. —

ԻԹ

Յաղագս Սրաւի

Նշանքն է. լինի ի սրաւնքն զեղ ոսկոր
ուռեց խիստ պինտ. և թէ ի զաւգվածն

մտնէ՝ աւերի գրաստն. Բժշկութիւնն է.
Քրի զմէջտեղն և սպրկցո ի մաղէ. և
ապա առ աշիշ որ լայնքն սրաւին չքաւք
լինի, շանթացոյ և կալ ընդդէմ յերակ՝ որ
խիստ տաքնա սրաւն, ու բոյթաւ մոտ-
նէ որ տորթէ սերտ յաւրն երկու հետ.
ու եր լեղենաա յաճեկն, դու լեւէ տաշեղ
զառիկ ու շաղէ, ու ի վերայ դիր սրաւ-
սին չքաւք ու կապէ. ի յաւրն Բ հետ ա-
րա զդեղոյ ինչվի. հալի սրաւն: Այլ դեղ.
Նոյն նշանաւք քրիզմէ և շողցո և աճ-
ռէ. և առ անլուա սապոն, ու մարդոյ խի-
զով տորթէ ու ի վերայ դիր. և այս կեր-
պովս արա մինչև հալի սրաւն. և քանի
մատողաշ լինի գրաստն՝ նա շոյտ ողջա-
նա. —

Լ

Յաղագս Նշանքն Զանաւեկոյ զրա գրաստն
և զփատարն

Նշանքն աւաղ, յակընջէ ականջ արձակ.
բերանն մեծ, շրթունքն նաւար. քմափողքն
արձակ. դունչն ի պախց տեղոյն ի վայր
պարկեշտ. աչքն մեծ և յիստակ, և պտուղն
թուխ և յիրացմէ հեռու, և կոպն նաւար.
ականջն ի ցից և յերկայն. տակքն բա-
րակ մինչև ի մաւտ ի մէջն, և քանի ի
վեր երթա՝ նա լայննա, և ծայրն սուր,
և լինի ականջն պարկեշտ և նաւար, և երբ
բռնես՝ պինտ: Դուրեթն կակուղ և յեր-
կայն. և մանոր մազն որ ի հետ կա՝ կա-
կուղ. և ոսկրն որ ներքե դուրեթն կա՝
ցած: Շնին յերկայն, և փողքն և ճիւղն
բարակ և նաւար. և շինոյն Բ ջեղն որ
յուսն ինչվի ծոծրակն է՝ ներքե քաշին
երբ բռնես, նա պինտ լինի և ի լար. և
շինոյն ներքե մորթն ի կախ զեղ եզին.
Նքթէպն բարձր, և բիճ զլինին ի թաղ-
ման. և երբ բռնես՝ նա լինի պինտ. և
բռնացն մէջն ի դուրս. և ողնշարն դորդ՝
որ շինոյն վկայէ: Կուրծքն արձակ, և կր-
ծոցն Բ ձկունքն ի դուրս, և մորթն որ ի
վերայ է՝ կակուղ, և երկնին՝ որ ի յինք
կա՝ հաստ: Ծղիքն կարճ և հաստ, և յե-

տի կարթըն լայն, և յետի ձկունքն հաստ.
և երկնին շատ և յերեւան, և կարթըն ի
յոտն : Երբուծն նաւար և ցած . կողքն
լայն և հաստ : Ծունկըն պարկեշտ և ի
մաւտ յիրար, և ջղերն որ ի վերայ բազ-
կացն ափռեալ է՝ նա աղէկ յերեւան լինի,
կոճքն կարճ և աղաւիմա է, և ջիղքն կարճ
և ի թաղմնի, որ ոչ աւելի ի յոտն լինի
կոճքն և ոչ աւելի կակուղ քան զչաքսն :
Սրմբակըն մեծ և կակուղ և գուշ, և կը-
րունկըն դէպի դուրս, և գորտն ամուր և
չորս : Մասնքն՝ որ ինչվի ի վերայ քո-
վացն հասնի . վերի դեհն հաստ և ներ-
քինն նաւար և արձակ յիրացմէ : Մէջքն՝
ի նքթիպէն ինչվի պճկոռացն հուլն՝ կարճ
և հաստ . և պճկոռացն յերկայնքն և
լայնքն և բարձրութիւնն ի չաք : Անդ-
մանքն շքեղքն արձակ և ագետկուն ներ-
քե . միսն հաստ և պինդ, և մորթն լաւ
ի փակման . անդամն լայն, և պըճուկն ի
բարձր վի ցած ի չաք . և խնձորքն ի
չաք՝ ի դուրս վի ներս, և ոռն ի հեռու
ի ձուռցն և արձակ՝ որ կոճքն գիրար
չծածէ . և անդամնքն ձկունքն՝ ներքաինն
և դրուցինն հաստ և լայն և մսլի և պինտ . և
այն մեծ երակն՝ որ ներքե անդամնքն կե-
նա՝ հաստ և կարճ . և կոճքն կարճ, և
ջեղն հաւասար ի յետի կոճացն ի վայր .
և լինի առջի ոտ »

Պ Լ Ս Ի Դ Ն Մ

Ամբողջայոյ՛դ կը սիրեմ ժամը վայրագ
Փարնանային զովացուցիչ փոթորիկ,
Երբ եթերի առիւծներու պէս հողմեր՝
Մտընդագո՛ւ կ'անցնին մըրթիկ սքփռելով .
Բոյս, ծաղիկ, ծառ բուսթիւնն ամբողջ կը սարսի,
Կ'ողեցադուլն՝ կ'անջընդանան թռուդիկներ,
Կ'սգևորսին թրուշ կ'առնուն անշուշներ :

Շուտով շանթեր սաստիկաշառաչ ճա՛յթ ի ճայթ՝
Մոա՛յլ ամպերուն որսունդո՛ւստ ձայնակցին,
Դեթթեղագրճճ բի՛ւր փայլակներ պակասցիւ
Արեգն զէժ ճակատամա՛րտ յորինեն,
Ջրեղեղեղներ մինչ գահալէ՛ժ շե՛ղլ ի շեղլ՝
Ու գիւշունչ խուժ ցամբներ մեծալա՛ւ .
Շեփորափո՛ւն հընչեցընեն երկրաշարժ .

Բայց Արեգա՛կը յաղթական ու անփոյթ
Միւրթ բացընթիկ ցօղի մ'ետին լուրթկապոյս
Յոյց տայ դէժքն իր ճաճանչաղեղ ժըպտազարդ՝
— Ինչպէս անդոյրն՝ որ կը յաղթէ մեր կերքին —
Երանաւտ իբրեւ չընաղ դիցունի .
Վարդ ամպերն են՝ իր ծիրանոյն ըրդանցներ,
Ճառագայթներն՝ իր չապարճներ յաղթական,
Եւ իր աղեղ՝ ուսին նետուած ծիածան :

* *

ԱՏՈՄ ԵԱՐՃԱՆԵԱՆ

Ու այն դիակները որ կը փռուէին խուլ
անկիւն մը, թշնամիին գնդակներով բզրկ-
տուած մարմինները, չունենայի՞ն իրենց
յիշատակը անմահացնող քնար մը :

Կայծակէ գրիչը մըրկի մէջ թաթիւելով
պիտի արձանագրուէր Հայորդիներու հե-
րոսական պատմութիւնը : Պատմիչ չի կայ,
երգիչ կայ . երգող շատ, սակայն հայոր-
դիներու երգիչը ան պիտի մոռնար վարդն
ու պուլպուլը, արշալոյսն ու վերջալոյսը,
լուսնակին թախիծը և գետակին կարկա-
չը : Այդ ամէնը կը մոռնայ քնարը , ու
բուն լարերը կը յուզուին կտրիճներու փո-
թորկով : Գեղեցկին և զրականին օրէնք և
արուեստ ընդվզումի քնարին եղբայրակցած
չեն . խստերախ լարուած կրակով բռն-
կած ուժը՝ ըմբոստացումի գոռ մարտորո-
ւոր՝ խռովեալ գետերու մէջ կը պայթեցնէ .
մարած հրաբուխները կը հրդեհէ, երկին-
քի սեմէն ներս բողբոջ կը կտակէ : Հե-
րոսական շրջանին կը սպասէր վարպետ
նկարչին . քնարով պատկերահան մը՝ մեր
հոգիին մէջ պիտի քանդակէր մեր արհա-
ւիրքին պատկերը : Երանանեան ուզած է
այդ պատկերահանը ըլլալ : Յանդգնութիւն
է . բայց գուցէ ունի ոյժ , պահանջուած
շնորհը :

*

Յանդգնութիւն . բայց ինքն ալ հայոր-
դիներու յանդգնութիւնը կ'երգէ . յանդուգն
նաև այդ կտրիճները : Երգիչ ու դիւցազ
համանման խանդավառութեամբ դժոխքի